ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԿՈՂԲԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Թիվ 06
15 փետրվարի 2021 թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Հ. Մաթևոսյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Կից Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Կողբաման համայնքի ավագանու 15փետրվարի 2021 թվականին կայացած թիվ 01 հերթական նիստի որոշումների փաթեթը:

Առդիր 10 թերթ

Կողբաման համայնքի ղեկավար Ս. Սերոբյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԱՏԱՐԱՆ
Մուտք թիվ 03817-2021
17.02.2021 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԿՈՂԲԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

15 փետրվարի 2021 0 նիստ

ՈՐՈՇՈՒՄ N 01

ԿՈՂԲԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 01 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով

Ավագանին որոշում է

1.Հաստատել - Կողբավան համայնքի ավագանու թիվ 01 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

Ավագանու անդամներ՝

	Կողմ / 4	Դեմ / 0	Ձեռնպահ / 0
1. Գրիգորյան Էդուարդ			
2. Սերոբյան Վահրամ			
3. Սլոյան Ասադ			
4. Օզմանյան Ֆայզո			

Կողբավան համայնքի ղեկավար Ս. Սերոբյան

2021 թվական
15 փետրվարի
գ. Կողբավան

Հավելված 1
...ավիրի մարզի
...րբավան համայնքի
...ավագանու թիվ 01
...թական նիստի
որոշում թիվ 01
...փետրվարի 2021թ.

1.Օրակարգի հաստատում

2. Կողբավան համայնքի 2021 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:
3.Ավագանու 2021 թվականի նիստերի ժամանակացույցի հաստատման մասին:
4.Կողբավան համայնքի սեփականության ամենամյա գույքագրում կատարելու մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԿՈՂԲԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

15 փետրվարի 2021թ. 01 Նիստ 02-Ն որոշում

ԿՈՂԲԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 25-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի >> մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով և 34-րդ հոդվածի 1-ին մասով

Համայնքի ավագանին որոշում է

1. Կողբավան համայնքի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի <<Կողբավան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 25-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրվանից:

Ավագանու անդամներ

	Կողմ /4/	Դեմ /0/	Ձեռնպահ /0/
Վ. Սերոբյան			
Է. Գրիգորյան			
Ա. Սլոյան			
Ֆ. Օզմանյան			

Կողբավան համայնքի ղեկավար Ս. Սերոբյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիր մարզի Կողբական համայնքի
Ավագանու 2021 թվականի
01 նիստ
Թիվ 02 -Ն որոշման

ԿՈՂԲԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ29-Ի ԹԻՎ 25-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. **Ծախսերի մասով՝**

1) Վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը՝ 179.6 հազար դրամն ուղղել 01.6.1 դասի 5113 հոդվածին
2) Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդից 7000.0 հազար դրամ ուղղել 01.6.1 դասի 5121 հոդվածին
3) Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդից 2613.8 հազար դրամ ուղղել 01.6.1 դասի 5113 հոդվածին
4) Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդից 8000.0 հազար դրամ ուղղել 01.6.1 դասի 5112 հոդվածին
5) Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդից 6000.0 հազար դրամ ուղղել 01.6.1 դասի 5129 հոդվածին
6) Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդից 1000.0 հազար դրամ ուղղել 01.6.1 դասի 5122 հոդվածին
7) Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդից 1000.0 հազար դրամ ուղղել 01.6.1 դասի 5133 հոդվածին
8) Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդից 1000.0 հազար դրամ ուղղել 01.6.1 դասի 5134 հոդվածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԿՈՂԲԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

15 փետրվարի 2021 թ. 01 նիստ

ՈՐՈՇՈՒՄ 03

ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով.

Ավագանին որոշում է.

1. Հաստատել - Արմավիրի մարզի Կողբավան համայնքի ավագանու 2021 թվականի նիստերի ժամանակացույցն ըստ հավելվածի

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

Ավագանու անդամներ

Կողմ - 4 դեմ -0 ձեռնպահ -0

1. Վ.Սերոբյան
2. Է. Գրիգորյան
4. Ա.Սլոյան
5. Ֆ.Օզմանյան

Կողբավան համայնքի ղեկավար Ս. Սերոբյան

2021 թվական
15 Փետրվարի
գ. Կողբավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԿՈՂԲԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

15 փետրվար 2021թ.. 0 1 նիստ

ՈՐՈՇՈՒՄ N 04
ԿՈՂԲԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 2021 թվականի փետրվարի 2-ի թիվ 01 կարգադրությունը.

Ավագանին որոշում է

1. Հաստատել - Արմավիրի մարզի Կողբավան համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի;
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

Ավագանու անդամներ՝

Կողմ / 4 Դեմ / 0 Ձեռնպահ / 0

1. Գրիգորյան Էդուարդ
2. Սերոբյան Վահրամ
3. Սլոյան Ասադ
4. Օզմանյան Ֆայզո

Կողբավան համայնքի ղեկավար Ս. Սերոբյան

2021 թվական
15 փետրվարի
գ. Կողբավան

Արդարադատության
Նախարարություն

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Կողբավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 25-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

1. «Կողբավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 25-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) անվանումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 11-րդ հոդվածի պահանջներին, մասնավորապես՝ Նախագծի անվանման մեջ «ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ» բառն անհրաժեշտ է փոխարինել «ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ» բառերով, հանել «Նիստ» բառը, ինչպես նաև նշել իրավական ակտի բնույթը:

2.Նախագծի Հավելվածի վերնագրում «ԿԱՏԱՐԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառերով:

3. Հարկ ենք համարում ընդգծել, որ եթե ներկայացված նախագծով կատարվում են բյուջեի եկամուտների կամ ծախսերի ավելացումներ կամ նվազեցումներ, ապա դրանց վերաբերյալ նախագծով առաջարկվող կարգավորումները չեն կարող ինկորպորացվել, այլ կերպ ասած՝ արտացոլվել հիմնական իրավական ակտում, այսինքն՝ տվյալ համայնքի բյուջեում, եթե տվյալ փոփոխությունները կամ լրացումները չկատարվեն տվյալ բյուջեն հաստատելու վերաբերյալ որոշման հավելվածներում՝ ներկայացվող նախագծի հավելվածների տեսքով: Հիշյալ դիտողությունը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներից, մասնավորապես՝ նորմատիվ իրավական ակտում կատարվող փոփոխությունների կամ լրացումների ձևը (տեսքը) պետք է համապատասխանի փոփոխվող կամ լրացվող

իրավական ակտի ձևին (տեսքին): Այդ առումով նախագծի բյուջեի եկամուտների կամ ծախսերի ավելացումներ կամ նվազեցումներ սահմանող դրույթներն անհրաժեշտ է նախատեսել Նախագծի հավելված հանդիսացող աղյուսակի տեսքով:

4. Միաժամանակ հայտնում ենք, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ փորձաքննության ներկայացվող նորմատիվ իրավական ակտին կցվող հիմնավորման մեջ շարադրվում են կարգավորման ենթակա ոլորտի կամ խնդրի սահմանումը, առկա իրավիճակը (եթե կիրառելի է), կարգավորման նպատակները, ակնկալվող արդյունքը, ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը:

Վերոգրյալ կարգավորումների լույսի ներքո փորձաքննության ներկայացվող նորմատիվ իրավական ակտին կցվող հիմնավորման մեջ պարտադիր պետք է շարադրվեն կարգավորման ենթակա ոլորտի կամ խնդրի սահմանումը, առկա իրավիճակը, կարգավորման նպատակները, ակնկալվող արդյունքը, ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը: Այսինքն՝ համայնքի բյուջեում կատարվող ցանկացած փոփոխության ժամանակ անհրաժեշտ է նախագծի հիմնավորման մեջ հստակ նշել, թե ինչ ուղղություններով և ինչ նպատակով են ավելացվում կամ նվազեցվում բյուջեի ծախսերը: Այնինչ, տվյալ պարագայում նախագծին կից ներկայացված հիմնավորումը թերի է և չի արտացոլում ակտի ընդունման անհրաժեշտությունը և էությունը:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ նախագծի հիմնավորումն անհրաժեշտ է լրամշակել:

Իրավական ակտերի փորձաքննության
գործակալության պետ՝

Արդարադատության
Նախարարություն

2/2/2021

X

Emil Margaryan

Signed by: MARGARYAN EMIL 4014910245

ԷՄԻԼ

ՄԱՐԳԱՐՅԱՆ